Գիտելիքների փունջ:

Սեպտեմբերի մեկը գիտելիքի օրն է,սկսվում է նոր ուսումնական տարին,որը կբերի ոչ միայն նոր գիտելիքներ, այլ նաև նոր ու դրական զգացողություններ:Հազարավոր տղաներ և աղջիկներ շտապում են դպրոց `հանդիպելու ընկերներին և կիսվելու ամառային արձակուրդների մասին հիշողություններով:Այս կարևոր օրը աշակերտներն իհարկե ծաղիկներ են նվիրում իրենց ուսուցիչներին:Սա յուրօրինակ շնորհակալություն է այն գիտելիքների համար,որոնք արդեն ստացել են և որոնք դեռ ստանալու են :Իսկ այժմ առաջարկում ենք ձեզ ստեղծել <<Գիտելիքների փունջը>>:
Որպեսզի ծաղիկ ավելացնենք փնջի մեջ, հարկավոր է ճիշտ պատասխանել մեր հարցերին:
Դե ինչ,սկսենք:
1. Առաջին ծաղկի ստացման համար հարկավոր է լուծել խաչբառը,որը կօգնի վերհիշել `ինչ առարկաներ ուսումնասիրեցինք անցած տարվա ընթացքում:Իսկ այս տարի ավելի ենք խորացնելու մեր գիտելիքներն այդ առարկաներից :

Ուղղահայաց

1. Այս դասին մենք նկարում ենք, գունավորում, աշխատում մատիտներով:
3. Այս դասին մենք ծանոթանում ենք մեզ շրջապատող աշխարհի հետ:
5. Այս դասին մարզում մենք մեր ուղեղը :
Հորիզոնական
2. Այս դասին մենք սովորում ենք խոսել և գրել այլ լեզվով: Օրինակ՝ "здравствуйте":
4. Այս դասին ասում ենք "Hello", "book", "thank you":
6.Այս դասին մենք վազում ենք, թռչում, խաղում և մարզվում:
7. Այս դասին մենք գումարում ենք, հանում, բազմապատկում, բաժանում և լուծում խնդիրներ:
8. Այս դասին մենք կարդում և գրում ենք հայերեն, սովորում ենք բառեր:

dasxek.am

անուն,ազգանուն _____ամսաթիվ_____

ԽԱՉԲԱՌ

ԳՈՒՇԱԿԻՐ ԱՌԱՐԿԱՆ

Կարդացե՛ք ստորև բերված հուշումները և լրացրեք աղյուսակը:



ՈՒՂՂԱՀԱՅԱՑ

1. Այս դասին մենք նկարում ենք, գունավորում, աշխատում մատիտերով:
3. Այս դասին մենք ծանոթանում ենք մեզ շրջապատող աշխարհի հետ
5. Այս դասին մարզում մենք մեր ուղեղը

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

2. Այս դասին մենք սովորում ենք խոսել և գրել այլ լեզվով: Օրինակ՝ "здравствуйте",
4. Այս դասին ասում ենք "Hello", "book", "thank you"
6. Այս դասին մենք վազում ենք, թռչում, խաղում և մարզվում:
7. Այս դասին մենք գումարում ենք, հանում, բազմապատկում, բաժանում և լուծում խնդիրներ
8. Այս դասին մենք կարդում և գրում ենք հայերեն, սովորում ենք բառեր:


1Ամ ա թ ե Մ ա տ ի կ ա
2Ռ ու ս ե ր ե ն
3Ամ ա յ ր ե ն ի
4ա ն գ լ ե ր ե ն
5Ե Ա Խ Ա Տ
6Ֆ ի զ կ ու լ տ ու ր ա
կ ե ր պ ա ր վ ե ս

Դուք հաջողությամբ կատարեցիք առաջին առաջադրանքն ու ծաղիկն արդեն ծաղկեփնջում է:

2. Երկրորդ հանձնարարությունը կատարելու համար ձեզ կօգնեն <<Ես և շրջակա աշխարհը >>առարկայից ստացած գիտելիքները: Ուշադիր նայեք նկարներին և փորձեք կռահել,թե որ կենդանու մասին է խոսքը:

- Սա մեծ գիշատիչ է, հաճախ համարվում է ծովային կաթնասուն, քանի որ տարվա շատ ամիսներ անցկացնում է ծովում: Այս կենդանատեսակ գերադասում է սառցակալող ծովի մայրցամաքային եզրաշերտը և արկտիկական կղզիախմբերը:Ո՞ր կենդանին է: / Բևեռային արջ/:
- Սա փոքրիկ, փափուկ կենդանի է, որն ունի բեղիկներ և շատ է սիրում մկներ բռնել , գիշատիչների կարգին պատկանող կաթնասուններ են: Համարվում են ամենատարածված «ընկերակից կենդանիներից» մեկը:/Կատու/
- Այս կենդանատեսակներն ունեն մեծ գլուխ, սուր դունչ, հզոր, հնգամատ թաթեր: Նրանք ամենակեր են, ունակ են լավ մագլցելու և լողալու, արագ վազում են, կարող են կանգնել ու անցնել կարճ տարածություններ ետին թաթերի վրա: /Արջ/
- Սա ցատել սիրող կենդանի է՝ երկար ականջներով: Նա շատ արագ է և սիրում է գազար ու կանաչեղեն:/Նապաստակ/
- Այս կենդանին ապրում է ջրում, ունի հարթ ու փայլուն մաշկ, ցատկում է ջրից դուրս և հաճախ լողում է իր խմբով:/Դելֆին/
- Այս կենդանին ապրում է անապատում, ունի սապատ և կարող է երկար ժամանակ առանց ջուր մնալ:/Ուղտ/
- Այս միջատը փոքրիկ է, ունի կլոր կամ օվալաձև մարմին, շատ ուռուցիկ, վերևից՝ լերկ կամ մազոտ, հաճախ՝ խայտաբղետ գունավորված (վառ կարմիր, դեղին՝ մուգ պուտերով կամ

շերտերով՝ օղակված բաց գույնի պսակով): Գլուխը փոքր է, բեղիկները՝ կարճ: :/Զատկաբզեզ/

- Այս կենդանիները պատկանում են ողնաշարավորների տիպի սողունների դասին :Նրանք նայում են անթարթ, նրանց աչքերը կոպեր չունեն, ծածկված են լոկ թափանցիկ թաղանթով: Ժամանակ առ ժամանակ մաշկափոխվում են, նույնիսկ աչքերի վրայի կլոր, թափանցիկ թաղանթն է ընկնում:/օձ/

Սա մեծ գիշատիչ է, հաճախ համարվում է ծովային կաթնասուն, քանի որ տարվա շատ ամիսներ անցկացնում է ծովում: Այս կենդանատեսակ գերադասում է սառցակալող ծովի մայրցամաքային եզրաշերտը և արկտիկական կղզիախմբերը:
Ո՞ր կենդանին է:

Սա փոքրիկ, փափուկ կենդանի է, որն ունի բեղիկներ և շատ է սիրում մկներ բռնել , գիշատիչների կարգին պատկանող կաթնասուններ են: Համարվում են ամենատարածված «ընկերակից կենդանիներից» մեկը:
Ո՞ր կենդանին է:

Այս կենդանատեսակներն ունեն մեծ գլուխ, սուր դունչ, հզոր, հնգամատ թաթեր: Նրանք ամենակեր են, ունակ են լավ մագլցելու և լողալու, արագ վազում են, կարող են կանգնել ու անցնել կարճ տարածություններ ետին թաթերի վրա:
Ո՞ր կենդանին է:

Սա ցատել սիրող կենդանի է՝ երկար ականջներով: Նա շատ արագ է և սիրում է գազար ու կանաչեղեն:
Ո՞ր կենդանին է:

Այս կենդանին ապրում է ջրում, ունի հարթ ու փայլուն մաշկ, ցատկում է ջրից դուրս և հաճախ լողում է իր խմբով:
Ո՞ր կենդանին է:

Այս կենդանին ապրում է անապատում, ունի սապատ և կարող է երկար ժամանակ առանց ջուր մնալ:
Ո՞ր կենդանին է:

Այս միջատը փոքրիկ է, ունի կլոր կամ օվալաձև մարմին, շատ ուռուցիկ, վերևից՝ լերկ կամ մազոտ, հաճախ՝ խայտաբղետ գունավորված (վառ կարմիր, դեղին՝ մուգ պուտերով կամ շերտերով՝ օղակված բաց գույնի պսակով): Գլուխը փոքր է, բեղիկները՝ կարճ:
Ո՞ր կենդանին է:

Այս կենդանիները պատկանում են ողնաշարավորների տիպի սողունների դասին :Նրանք նայում են անթարթ, նրանց աչքերը կոպեր չունեն, ծածկված են լոկ թափանցիկ թաղանթով: Ժամանակ առ ժամանակ մաշկափոխվում են, նույնիսկ աչքերի վրայի կլոր, թափանցիկ թաղանթն է ընկնում:
Ո՞ր կենդանին է:

<u>Դե ինչ երկրորդ ծաղիկը ևս ստացանք:</u>

3**. Երրորդ** հանձնարարության առարկան մաթեմատիկան է:Եկեք միասին լուծենք մաթեմատիկական խաչբառը :

Անուն, ազգանուն

դասարան ամսաթիվ

			+	3	=	
+		+				+
		2	+	5	=	7
=		=		+		=
2	+	4	=			12

		+						
							=	
		1		6	+	5	=	
+		=		+				
3	+		=	4				
=				=				
10								

Մաթեմատիկական խաչբառ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1		2	+	3	=	5
+		+				+
1		2	+	5	=	7
=		=		+		=
2	+	4	=	6		12
				=		
				11		

		0		
		+		
7		1		6
+		=		+
3	+	1	=	4
=				=
10				10

Երրորդ ծաղիկը նունպես համայրում է մեր ծաղկեփունջը:

4. **Հաջորդը** << Մոգական քառակուսի>>ն է:

Մաթեմատիկայում մոգական քառակուսին թվերի այնպիսի դասավորություն է, որտեղ ցանկացած տողում, սյունակում և անկյունագծում եղած թվերն ունեն միևնույն գումարը:

6		8
	9	
10		12

Թաքնված թվեր-13,11, 7, 5

Այո,այս հանձնարարությունն էլ է կատարված, և մեր փունջն ավելացավ ևս մեկ ծաղկով:

5**. Մյուս** փուլը նվիրված է մեր սիրելի մայրենիին: Կան այնպիսի բառեր հայերենում,որոնք սովորողները պետք է գրեն առանց սխալի՝ հիշելով հայերենի ուղղագրության կանոնները:Ահա մի քանի բառ,որոնցում բաց են թողնված տառեր:Համոզված ենք,որ առանց դժվարության կլրացնեք այդ տառերը ևս :

դդում	չորրորդ
դադար	միջև
կրկնորինակ	կարագ
եղբայր	դեղձ

Եվս մեկ ծաղիկ մեր գեղեցիկ ծաղկեփնջում:

6. Այն դառնում է ավելի ու ավելի գրավիչ,եկեք մի ծաղիկ էլ ավելացնենք այն գիտելիքների շնորհիվ,որ ստացել ենք երաժշտության դասաժամին:

Ներկայացնում ենք տառաշարի մի տարբերակ, որտեղ թաքնված են 10 երաժշտական գործիքների անուններ՝ ուղղահայաց, հորիզոնական և անկյունագծային դիրքով:

dasyek.am

Եղե՛ք ուշադիր և գտե՛ք բոլոր բառերը:

ՈՒ	Ք	Ա	Մ	Ա	Ն	Չ	Ա	Ա	Օ
Դ	Ա	Շ	Ն	Ա	Մ	ՈՒ	Ր	Կ	Ո
Հ	Ն	Կ	Ի	Թ	Ա	Ռ	Ձ	Ո	Ս
Ո	Ո	Ն	Տ	Մ	Ք	Ջ	Վ	Ր	Ր
Լ	Ն	Դ	Ռ	Բ	Լ	ՈՒ	Լ	Դ	Ի
Ռ	Մ	Ֆ	Ի	ՈՒ	Մ	Թ	Ա	Ե	Ն
Շ	Վ	Ի	Տ	Կ	Ե	Ա	Ս	Ո	Գ
Բ	Ձ	ՈՒ	Ռ	Ն	Ա	Կ	Ի	Ն	Լ

Թաքնված բառեր- դաշնամուր,կիթառ,ակորդեոն,դհոլ,շվի,քանոն, բլուլ,քամանչա,ջութակ,սրինգ,զուռնա:

7. Եկեք ավելացնեն վերջին ծաղիկը մեր փնջին:Դրանում մեզ կօգնի կերպարվեստը:

Ահա տառերի շարք,որի ճիշտ դասավորման դեպքում դուք կստանաք կերպարվեստի ժանր, որտեղ պատկերվում են անշարժ, անշունչ առարկաներ՝ սովորաբար տնային կահկարասի, մրգեր, ծաղիկներ, ձկներ, վայրի թռչուններ, որևէ մասնագիտության պիտույքներ:

/պատասխան՝ ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ/

Յ	Տ	Ա	Ն	Մ	Տ	Ր	Ո	ՈՒ	Ր

Հրաշալի է,դուք հավաքեցիք ամենագեղեցիկ ծաղկեփունջը ձեր ուսուցչուհու համար՝ գիտելիքների փունջը:Մենք մաղթում ենք ձեզ հաջողություններ նոր ուսումնական տարում և բարձր առաջադիմություն :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ:

dasyek.am